ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՄՆԷՊԾ-ՀՄԱԱՊՁԲ-25/203

ք. Երևան «25» /դեկտեմբերի/2025թ.

1.1. Շրջակա միջավայրի նախարարությանէկոպարեկային ծառայությունը ի դեմսգլխավոր քարտուղար Լուսինե Ալեքսանյան ի, ով գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « ՊԵԳԱՍ-200»-ը, ի դեմս տնօրեն Վարուժան Էլոյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով

նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ջննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի

համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված

փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 22 500 000 (քսաներկու միլիոն հինգ հարյուր հազար)ՀՀ դրամ:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով

անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

-

ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում

Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի

չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9] [4] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը [5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի

ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին

ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11.1 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը, իսկ գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում՝ բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ **ք. Երևան, Ա. Արմենակյան 129** **ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**	**«ՊԵԳԱՍ-2000» ՍՊԸ** **Ք.Վանաձոր Զ/Ա 99/40** ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ 2052822304781001 **06970658**
900011023265	
00476409	**տնօրեն՝ Վարուժան Ալոյան**
գլխավոր բարտուղար **Լ. Ալեքսանյան** **/ստորագրություն/** **Կ.Տ**	**/ստորագրություն/** **Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«25» դեկտեմբեր 2025թ. կնքված
«ՇՄՆԷՊԾ-ՀՄԱԱՊՁԲ-25/203» *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը		տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	35811170/4	Համազգեստ		Տեխնիկական բնութագիրը կցվում է	լրակազմ	75000	22 500 000	300	ք. Երևան Ա. Արմենակյան 129 3-րդ հարկ	300	Ապրանքների մատակարարում ն իրականացվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 29.12.2025թ

Տեխնիկական բնութագիր

Ընդհանուր պահանջներ

Համազգեստը կարել schmetz ֆիրմայի SPI դասի 90-100 համարի ասեղներով, բոլոր զարդակարերը կատարել 1սմ-ում 3.5 կարակոյտ տարբերակով, միացման բոլոր կարերը և կոմբինացված մաքրակարերը կատարել 1սմ-ում 4 կարակոյտ: Զարդակարերի համար օգտագործել 80 համարի պոլիամիդային թելեր, մաքրակարերի համար օգտագործել 120 համարի պոլիեթերային թելեր:

Կիրառվող Գործվածքներ

Ձմեռային բլուզի երեսի գործվածք

30/70/10 փենյա սուպրեմ 3թել 310 գրամ խտության, 80% բամբակ, 20% պոլիէսթեր,

Ձմեռային բլուզի օժանդակ գործվածք

Պետք է լինի՝80% պոլիէսթեր, 20% բամբակ, խտությունը 200 գրամ, շեղումը՝ 5%

Հյուսք՝ Պլատինային (պոլոտնայա), ՎՕ: Ջրապաշպան և անջրաթափանց

Միջսեզոնային բաճկոնի երեսի գործվածք N 1

Կտորը պետք է լինի 80% պոլիէսթեր, 20% բամբակ, 200 գրամ խտության, ջրակայուն. Հյուսվածքը՝ Ռեբս, գույնը՝ համաձայնեցնել պատվիրատուի հետ:

Միջսեզոնային բաճկոնի երեսի գործվածք N 2

Կտորը պետք է լինի 50% բամբակ, 50% պոլիէսթեր, 260 գրամ խտությամբ,
պետք է լինի ջրակայուն և գերդիմացկուն շփմանը:

Միջսեզոնային տաբատի երեսի գործվածք N 1

Կտորը պետք է լինի 80% պոլիէսթեր, 20% բամբակ, 200 գրամ խտության, ջրակայուն. Հյուսվածքը՝ Ռեբս, գույնը՝ համաձայնեցնել պատվիրատուի հետ

Միջսեզոնային տաբատի երեսի գործվածք N 2

Կտորը պետք է լինի 50% բամբակ, 50% պոլիէսթեր, 260 գրամ խտությամբ, պետք է լինի ջրակայուն և գերդիմացկուն շփմանը:

Ձմեռային բաճկոնի երեսի գործվածք

Կտորը պետք է լինի 100% պոլիէսթեր, 140 գրամ խտությամբ, ջրակայուն, ջրամերժ, գույնը խակի՝ համաձայնեցնել պատվիրատուի հետ:

Աստառի գործվածք N 1

Փայլաթիթեղյա ծածկույթը 100% պոլիեսթեր է՝ հակաբակտերիալ ծածկույթով և արծաթի իոններով, պատրաստված Taffeta 210 և Dewspo 210 նյութերի հիման վրա: Առջևի կողմը տպագրված է շրջանակներով, քառակուսիներով և այլ երկրաչափական ձևերով, որոնք պատրաստված են ալյումինե փայլաթիթեղից, որը արտացոլում է մարմնի ջերմությունը:

Տաքացնող միջադիր

Միջադիրը պետք է լինի 150 գրամ, 1 մետր^2 վրա խտությամբ, 2 շերտ 64 D հումքով արտադրված:

Սոսնձային միջադրվածք

Պոլիեթերային չհյուսված պաստառ մշակված կաուչուկային հիմքով սոսնձով:

Ֆիթիլ

100% պոլիեթեր

Ֆլիզելին

100% պոլիեթեր

Ձմեռային բաճկոն N 2

Ընդհանուր նկարագրություն

Ձմեռային բաճկոն, S, նախագծված է ուղիղ ազատ նստեցումով, համար 5 կենտրոնական կայծակ շղթայով: Բաճկոնը բաղկացած է 4 վրադիր գրպաններից՝ իր կափույրներով, 2 կողմնային գրպանից, հետևամասից, հետևամասի կոկետկայից, զույգ առաջամասերից, զույգ առաջամասի կոկետկաներից, հետևամասի կոկետկայից, զույգ թևերից՝ իր ճուտերով, ներսի և դրսի օձիք-կանգնակներից, զույգ բաչոկներից, զույգ թևի մանժետներից և գոտուց, որը կազմված է 3 դետալից: Բոլոր կափույրները, մանժետները և գոտին նախապես կրկնորդել սոսնձային միջադրվածքով:

Առաջամասը- բաղկացած է կոկետկայից և ներքևի դետալից, որոնք միմյանց միանում են 5 թել կոմբինացված կարով(0,8-1սմ), շրջվում, շիտակ երեսից զարդակարվում 5-6մմ զարդակարով: Կոկետկայի և ներքևի դետալի միջև տեղադրվում է կրծքավանդակի վրադիր գրպանի կափույրը, որը մշակված է 1սմ կարաբաժնով և արահիշված, շրջված, զարդակարված է 6,2մմ զույգ ասեղով: Կափույրի պատրաստի չափերն են. Լայնությունը՝ 13,5սմ, բարձրությունը՝ 6սմ: Առաջամասի կենտրոնից կափույրը հեռացած է 5սմ-ով: Կրծքավանդակի վրադիր գրպանի լայնությունը 13սմ է, բարձրությունը՝ 13,5սմ: Այն նախապես պետք է մաքրակարել 3 թել մեքենայով, այնուհետև մուտքը մշակել 2սմ դարձածալով,որից հետո տեղադրել 6,2մմ-անոց զույգ ասեղով: Կափույրը գրպանի մուտքի հետ փակվում է զույգ մետաղական ճարմանդով: Առաջամասի ներքևի վրադիր գրպանը 19սմx16սմ է, այս պատրաստի չափերով այն մաքրակարել 3 թելով, մուտքը մշակել 2սմ-ով և տեղադրել 6,2մմ զույգ ասեղով: Ներքևի վրադիր գրպանի կափույրը առաջամասի կենտրոնից հեռացված է 3սմ-ով, ունի 17սմ լայնություն և 7սմ բարձրություն: Կափույրը մշակել 1սմ կարաբաժնով, արահիշել, շրջել, զարդակարել 6,2մմ զույգ ասեղով: Կապիույրը տեղադրել գրպանի մուտքից 3,5սմ հեռավորությամբ, կարաբաժինը արահիշել, շրջել դեպի ներքև, զարդակարել 5-6մմ զարդակարով:

Առաջամասի և բաչոկի միացման կարի թևատակից 19սմ հեռավորության վրա մշակել 18սմ մուտքով կողմնային գրպան: Առաջամասի և բաչոկի միացումը կատարել 0,8-1սմ կարաբաժնով, 5 թել կոմբինացված կարով: Կարաբաժինը շրջել դեպի հետ, զարդակարել 5-6մմ չափով:

Հետևամասը հետևամասի կոկետկային միացնել 0,8-1սմ կարաբաժնով կոմբինացված կարով, շրջել, զարդակարել 5-6մմ զարդակարով: Հետևամասը բաչոկին միացնել 0,8-1սմ կարաբաժնով, 5 թել կոմբինացված կարով: Առաջամասի կոկետկան հետևամասի կոկետկային միացնել 0,8-1սմ կարաբաժնով, 5 թել կոմբինացված կարով: Կարաբաժինը շրջել դեպի հետ, զարդակարել 5-6մմ զարդակարով: Թևը միացնել ճուտի հետ 0,8-1սմ կարաբաժնով, 5 թել կոմբինացված կարով: Մանժետի ½ հատվածում տեղադրել էլաստիկ ժապավեն, զարդակարել 1սմ զույգ ասեղով: Մանժետը միացնել թևքին 5 թել կոմբինացված կարով: Երեսի օձիք-կանգնակը ֆիքսել 1 տակ տաքացվող միջադիր նյութով, տեղադրել 1սմ կարաբաժնով: Գոտին բաղկացած է 3 կտորից, այն միացնել 0,8-1սմ 5թել կոմբինացված կարով, գոտու աջ և ձախ հատվածներում, սիմետրիան պահած, կողմնային կարից համաչափ դեպի հետևամաս 10սմ և դեպի առաջամաս 10սմ հեռավորության վրա տեղադրել էլաստիկ ժապավեն 10սմ չափով, զարդակարել 1սմ զույգ ասեղով: Գոտին տեղադրել փեշին 1սմ կարաբաժնով այնպես, որ կայծակ շղթայից 5սմ չափով մնա բացվածք՝ ցեպի մշակման համար: Կայծակ շղթայի վրա տեղադրել թելով մշակված կանթ: Կայծակ շղթան տեղադրել առաջամասին ուղղահայաց երկարությամբ՝ ապահովելով համաչափ 1սմ նստեցում: Թևքը տեղադրել թևատեղի փոքրվածքին 1սմ կարաբաժնով՝ պահպանելով աջ ու ձախ սիմետրիան և գեղեցիկ նստեցումը:

Աստառացուն բաղկացած է առաջամասից, հետևամասից, օձիք-կանգնակից, թևից՝ իր ճուտով, ընդ որում բոլոր դետալները մեկդակված են 2 տակ տաքացնող միջադիր նյութով, այնուհետև մաքրակարված՝ 3 թել մաքրակարով: Առաջամասի ձախ մասում առկա է ծոցագրպան: Ծոցագրպանը 4 կողմով մաքրակարել 3 թելով, մուտքը դարձածալել 2սմ-ով, զարդակարել, մուտքի կենտրոնական մասում տեղադրել կպչուկ(3սմ)՝ մուտքը փակելու համար: Ծոցագրպանի մի եզրը տեղակայել լանջատակի տեղադրման կարի տակ, մյուս կողմը տեղադրել ծալելով և զարդակարելով 1մմ զարդակարով: Լանջատակը տեղադրել առաջամասի աստառացուի կենտրոնական մասով ուղղահայաց, վերևից ներքև դեպի կողմնային կարը ծալել 1սմ-ով, զարդակարել 1մմ զարդակարով, դեպի կենտրոն ընկած հատվածը ֆիքսել առանց ծալվածքի: Աստառացուի բոլոր դետալները միացնել 1սմ կարաբաժնով: Աստառացուի ներկարումը կատարել այնպես, որ փակենք գոտու կարաբաժինները, կայծակ շղթայի երևացող մասը և մանժետի կարաբաժինները: Աստառացուի կարաբաժինները ֆիքսել երեսացուի կարաբաժինների հետևյալ տեղամասերում՝ երեսի և ներսի թևքի կողմնային կարաբաժինները՝ ներքևից 10սմ հեռավորության վրա, ուսագլուխները, վզի փորվածքը և կողմնային կարերը ամբողջ երկարությամբ: Կենտրոնական մասում կայծակ շղթայի վրա կատարել 5-6մմ զարդակար:

Կլոր վիզ բլուզ N 2

Ընդհանուր նկարագրություն

Բլուզ տաք- նախատեսված բաճկոնի տակից կրելու համար, նախագծված է ուղիղ ուրվագծով, կլոր վզով, թևերի և գոտու ներքևում մշակված մանժետային գործվածքով:

Առաջամասի կրծքի գծի մասում, աջ և ձախ հատվածում տեղադրել տարբերանշաններ 10x2.5սմ չափով: Հետևամասի և առաջամասի ուսի հատվածը միացնել 4 թել մաքրակարող մեքենայով, շրջել կարաբաժինը դեպի հետևամաս, զարդակարել 1մմ զարդակարով: Ուսերի օժանդակ դետալների կարաբաժինները նախապես ծալել արդուկով, տեղադրել ուսերի հատվածում 1մմ զարդակարով այնպես, որ կենտրոնական չռտվածքները համապասխանեն ուսագլխի կենտրոնի և վզի փորվածքի կենտրոնի հետ:

Թևքի արմունկի հատվածում առկա են արմունկի տեղամասը ամրացնող օժանդակ արմնկակալեր: Արմկակալերի կարաբաժինները նախապես արդուկով ծալել դեպի ներս և կարել 1մմ զարդակարով: Մշակել ուսադիրներ երկարությունը 14-16սմ լայնությունը 4-5սմ չաթով, երեսի մասից շուրջբոլորը զարդակարել 0,5-0,6սմ չափով: Ուսադիրը տեղադրել ուսագլխի կենտրոնական մասում, կոճկումը իրականացնել մետաղական կոճգամներով: Թևքը տեղադրել թևատեղի փորվածքին 4 թել մաքրակարող մեքենայով այնպես, որ նստեցումը լինի համաչափ և գեղեցիկ, թևի կենտրոնական չերտը համապատասխանի ուսագլխի կենտրոնի հետ: Կարաբաժինը շրջել դեպի գործը և զարդակարել 5-6մմ զարդակարով: Թևի եզրից մինչև փեշի եզրը կողմնային կարը փակել 4թել մաքրակարող մեքենայով: Փեշի մանժետի և թևի մանժետների եզրային մասերը միացնել ուղիղ կարով՝ կարակույտերը 1սմ-ում 4,5 կարակույտ: Կարաբաժինները բացել, արդուկել, այնուհետև մանժետները ծալել այնպես, որ շիտակ երեսը լինի դրսի մասում, իսկ թարս երեսը նայի թարս երեսին: Փեշի մանժետը և թևերի մանժետները տեղադրել փեշի եզրին և թևերի եզրերին 4թել մաքրակարող մեքենայով այնպես, որ բաշխվածությունը լինի համաչափ: Կարաբաժինները շրջել դեպի հիմնական գործվածքը, զարդակարել 5-6մմ զարդակարով: Վզի փորվածքի մանժետի եզրերը միացնել ուղիղ կարով (1սմ-ում 4,5 կարակույտ), կարաբաժինը բացել, արդուկել, այնուհետև մանժետը ծալել այնպես, որ շիտակ երեսը մնա արտաքին մասում, իսկ թարս երեսը նայի թարս երեսին: Ազատ մասը տեղադրել վզի փորվածքին այնպես, որ նստեցումը լինի համաչափ և գեղեցիկ: Հետևամասի վզի փորվածքի կենտրոնում տեղադրել չափս-հասակային տարբերանշան : Վզի փորվածքի հետևամասի կողմի կարաբաժինը փակել էլաստիկ գործվածքից կտրված բեյկայով, էլաստիկ բեյկան քաշել միայն շղթայական կարող մեքենայով և օժանդակ սարքավորումով: Կարաբաժնի այն տեղամասը, որտեղ կարված է բեյկան, արդուկով նստեցնել դեպի հետևամասի կողմը և զարդակարել 1մմ զարդակարով այնպես, որ շիտակ կողմում երևա 6-7մմ չափով զարդակար: Ձախ ուսամասից մինչև աջ ուսամաս՝ առաջամասի հատվածում, կարաբաժինը արդուկել դեպի առաջամաս և զարդակարել 1մմ զարդակարով: Կատարել վերջնական ջերմախոնավային մշակում:

Միջսեզոնային բաճկոն N 2

Բաճկոնը նախագծել ազատ նստեցումով: Առաջամասի աջ և ձախ կիսամասերում, կրծքի գծի վրա առկա են վրադիր գրպաններ՝ 14.5սմx15սմ-ի վրա, որոնց մուտքը մշակված է 2սմ ծալված դեպի ներս՝ ունիվերսալ ուղիղ կարով 1սմ կարաբաժնով, դեպի առաջամասի կենտրոնական մաս ընկած հատվածում, անկյունից 2սմ հեռավորությամբ տեղադրել կպչուն ժապավեն 2սմx4սմ-ով: Վրադիր գրպանը տեղադրել զույգ ասեղով (6,4մմ) կողմնային ներքևի մասում՝ ձևավորելով 3,5սմ չափով երկանկյուն ծալվածք: Կափույրները

դեպի բաճկոնի կենտրոն ընկած հատվածում 3,5սմ չափով երկանկյուն տեսքով և 2սմx4սմ չափով կպչուն ժապավենով ներսի կողմում վրայից կարել զույգ ասեղով, արաիշել, զարդակարել (6,4մմ): Տեղադրել 0,5սմ չափով, շրջել զարդակարել 6մմ-7մմ չափով ունիվերսալ մեքենայով:

Առաջամասի և բաչոկի միացման տեղամասը ունի կոր կտրվածք:

Առաջամասի և բաչոկի միացումը կատարել 5 թել կոմբինացված մաքրակարով, կոր տեղամասի կարի արանքում տեղադրել կափույր, որը ծածկում է կողմնային կայծակ-շղթայով մշակված գրպանը: Առաջամասի և բաչոկի միացման կորը զարդակարել զույգ ասեղով(6,4մմ):

Առաջամասի կողմնային մասից 11սմ հեռավորության վրա մշակել կայծակ-շղթայով գրպանապարկի հետ միասին կտրովի գրպան: Երկրորդ գրպանապարկը միացնել ներսի մասից 5 թել կոմբինացված մաքրակարով: Առաջամասը և հետևամասը միացնել ուսի հատվածում 5 թել կոմբինացված մաքրակարով և վրայից զարդակարել զույգ ասեղով (6,4մմ): Հետևամասի բաչոկները միացնել 5 թել կոմբինացված մաքրակարով, զարդակարել դեպի հիմնական դետալի կողմ զույգ ասեղով (6,4մմ): Կոկետկայի միացումը հետևամասին իրականացնել 5 թել կոմբինացված մաքրակարով, շիտակից զարդակարել կարաբաժինը դեպի կոկետկան զույգ ասեղով (6,4մմ): Թևքը կազմված է 2 վերևի և ներքևի դետալներից և աջ ու ձախ ճուտիկներից, որոնք միմյանց միացված են 5թել կոմբինացված մաքրակարով: Վերևի և ներքևի դետալները շիտակ երեսից կարաբաժինը դեպի ներքև զարդակարված են զույգ ասեղով (6,4մմ): Աջ և ձախ ճուտիկները, կարաբաժինը՝ դեպի աջ և ձախ, շիտակ երեսից զարդակարված են զույգ ասեղով (6,4մմ): Թևքի ներքևի եզրին մշակված է մանժետ՝ բաղկացած 2 դետալից: Մեծ դետալի ներսում տեղադրել էլաստիկ ժապավեն՝ 4սմ լայնքով, շիտակից կատարել զարդակար էլաստիկի հետ միասին: Կարճ դետալը միացնել երկարին ուղիղ կարով և փոքր դետալի վրա կատարել 6մմ զարդակար: Թևքը տեղադրել գործը բաց վիճակում 5 թել կոմբինացված մաքրակարով, որից հետո փակել կողմնային կարը 5թել կոմբինացված մաքրակարով: Մանժետը տեղադրել թևքի ներքևի եզրին ուղիղ կարով, որից հետո մաքրակարել 3 թել օվերլոկով: Կայծակ-շղթայի ատամները փակելու համար մշակել հիմնական գործվածքով դետալ, նախապես կրկնորդել սոսնձային միջնադրվածքով, վերևի անկյունները մշակել ուղիղ կարով, արաիշել, շրջել, տեղադրել: Կայծակ շղթայի ատամները ծածկող դետալները պատրաստի վիճակում պետք է ունենան 1սմ լայնություն և կայծակ շղթայի վրա ամեն 1սմ տեղամասի համար պետք է ունենա 1մմ նստեցում: Առաջամասի կենտրոնական հատվածները մաքրակարել 3թել օվերլոկով: Կայծակ-շղթան՝ մշակված ծածկող դետալով, տեղադրել առաջամասերի կենտրոնական

մասում ներքևի հատվածից 13մմ բարձր մինչև վզատեղի փորվածք: Լանջատակը երկու կողմից մաքրակարել և տեղադրել կայծակ-շղթային ներսի կողմից: Օձիքը բաղկացած է 2 դետալից, վերևի կենտրոնական հատվածում ունի կորություն: Օձիքի դետալները կրկնորդել սոսնձային միջադրվածքով և տեղադրվող տեղամասերը մաքրակարել 3 թել օվերլոկով: Օձիքի 2 դետալները շիտակը շիտակին միացնել ուղիղ կարով, կոր տեղամասը արաիշել կամ կատարել չրթվածքներ, շրջել, զարդակարել 1մմ-ով: Օձիքը տեղադրել վզատեղի փորվածքին՝ 1սմ կարաբաժնով: Շիտակ կողմից ներսի դետալի կարաբաժինը բաց վիճակում 1մմ զարդակարով կատարել փակում: Բաճկոնի փեշը մշակված է ներսի կողմ դարձածալվող գոտիով: Գոտին տեղադրել կայծակ-շղթայի տակից 1սմ կարաբաժնով, շրջել, մշակել կայծակ-շղթայի հետ, կատարել ջերմախոնավային նստեցում, զարդակարել 1մմ-ով: Գոտու փակումը կատարել ուղիղ կարով այնպես, որ լանջատակի ներքևի մասը մնա գոտու ներսում:

Առաջամասի և բաչոկի միացման կարի արանքում և հետևամասի ու հետևամասի բաչոկի միացման կորի արանքում տեղադրել փեշի չափի կարգավորիչ: Առաջամասի բաչոկի և հետևամասի բաչոկի միացման տեղամասից դեպի առաջամաս ընկած հատվածում, աջ և ձախ կողմերում տեղադրել օղակ (կոնտրիկ), որը մշակված է հարթակարող մեքենայով և ապահովում է կարգավորիչի հորիզոնական դիրքը: Կարգավորիչի առաջամասի կողմում ընկած հատվածը բաղկացած է հիմնական գործվածքով մշակված օղակից: Կարգավորիչի հետևամասի կողմում ընկած դետալը իրենից ներկայացնում է 3սմ լայնքով գոտի, որի եզրին և մեջտեղին տեղադրված են կպչուն ժապավեններ:

Միջսեզոնային տաբատ

Տաբատը նախագծված է ազատ նստեցումով, հարմարավետ և ազատ կրման նշանակությամբ: Առաջամասին առկա են կողմնային զույգ գրպաններ: Գրպանապարկը կարել, շրջել դեպի ներս, շիտակ երեսից զարդակարել 6,4մմ զույգ ասեղով: Մեծ գրպանապարկը, որը ձևված է սև գույնով տեղադրել 5 թել կոմբինացված մաքրակարով: Առաջամասի ծնկի գծի վրա առկա են սեղմոններ՝ ծնկի ծալման ազատությունը ապահովելու համար: Առաջամասի ծնկի սեղմոնների միջև հեռավորությունը 7սմ է, լայնությունը՝ 3սմ: Առաջամասի ծնկի գծի վրա տեղադրել ամրացնող դետալ հիմնական սև գործվածքից 6,4մմ զույգ ասեղով: Ամրացնող դետալների վրա նույնպես առկա են սեղմոններ, որոնք չափերով և դիրքերով համընկնում են առաջամասի սեղմոնների հետ:

Հետևամասի վերևի հատվածում առկա է սեղանաձև դետալ 3սմ բարձրությամբ, որը տեղադրված է 5 թել կոմբինացված մաքրակարով, շրջված զարդակարված է 0.5-0.6սմ ուղիղ կարով: Հետևամասի ծնկի ծալման հատվածում վրադիր տեղադրել ուղղանկյուն կենտրոնի մոտ կիսալուսնաձև փորվածքով ամրացնող դետալ 5 թել կոմբինացված կարով շրջել, զարդակարել 0.5-0.6սմ սև գույնի թելով Սլանը միացնել 5 թել կոմբինացված մաքրակարով, շիտակ կողմից տեղադրել 6,4մմ զույգ ասեղով: Առաջամասի և հետևամասի կողմնային մասերում ազդրերի հատվածում կա 6անկյուն բացվածք, որտեղ հավաքվում է գրպանների կոմպլեքս: Առաջամասի և հետևամասի կողմնային մասերը միացնել 5 թել կոմբինացված մաքրակարով, զարդակարել 6,4մմ զույգ ասեղով, կարաբաժինները դեպի հետևամաս: Կողմնային ներկառուցված գրպանի երկար մասում առկա է 1սմ-ով ծալվածք, 6սմ լայնությամբ վրադիր գրպան և 6սմ լայնությամբ կափույր: Կափույրը ունի կպչուն ժապավեն և զարդակարված է 1մմ զարդակարով: Ներսի գրպանները տեղադրված են ուղիղ կարով և մաքրակարված է 3 թել օվերլոկով: Վերջում, գրպանի եզրագծով 1մմ զարդակարել: Գուլֆիկ- օտկոսկան մշակել 18սմ կայծակ-շղթայով, վրայից զարդակարել զույգ ասեղով: Քայլքի գիծը փակել 5 թել կոմբինացված մաքրակարով:

Գոտին պատրաստի վիճակում 5սմ է: Նախապես գոտկամասին համաչափ բաշխել 1 սմ լայնություն ունեցող օղակները: Օղակները կարել 10սմ չափով, որպեսզի պատրաստի վիճակում լինի 7սմ : Գոտու մի եզրը ըստ երկարության մաքրակարել 3 թել օվերլոկով, ծալել, արդուկով ջարդել: Գոտին տեղադրել 1սմ կարաբաժնով, գուլֆիկ-օտկոսկայի հատվածը մշակել, անկյունները շրջել և փակումը իրականացնել 1մմ զարդակարով: Օղակների ազատ եզրը ամարակարել գոտու եզրին: Տոտերը մաքրակարել 3 թել օվերլոկով, 2 անգամ ծալել 1,5սմ-ով և փակել 1մմ զարդակարով: Տաբատի ներքևի եզրին կենտրոնական մասում մշակված և տեղադրված է չափը կարգավորող խլյաստիկ, որի վրա կարված է կպչուկ: Փեշի հատվածում կողմնային կարից 10սմ աջ և ձախ տեղադրել կպչուկի փափուկ մասը: Կատարել վերջնական խոնավաջերմային մշակում:

Գլխարկ

Գլխարկ սև գույնի ունիվերսալ՝ «Բինի» ոճի, ճակատային մասում մանժետ, 1շիտակ 1թարս, իսկ վերևի հիմնական հատվածում լրիվ շիտակ տրիկոտաժայինգործվածքով: Օգտագործել խարնուրդային 50% կիսաէթէրային բարակ թելեր:

Կիսաճտքավոր կոշիկն ունենա խակի գույն: Վերին մասում (դիմային /մատների քթային հատված/, կրունկի, լեզվակի ներդիրներ)՝ միկրոֆիբր (100% պոլիամիդ /նեյլոն, ամրություն և դիմադրություն ունեցող քիմիական նյութ/) 55% (±2%) + 45% պոլիուրեթան (±2%), քաշը՝ 600±30 գ/մ²՝ (±10%), հաստությունը՝ 1,3±0,15մմ, վերև (լեզու, մեջք, սփոյլեր) 100% պոլիեսթեր շնչող գործվածք, սև, քաշը՝ 195-200 գ/մ² (±10%) շերտավորում:

- Պոլիեսթեր բուրդ, 100 գ, ջրակայուն (լեզու)
- Պոլիեսթեր փրփուր, հաստությունը 3մմ, ջրազերծող (սպոյլեր+մանժետ)
- Պոլիեսթեր փրփուր, հաստությունը 1,5մմ+շարմեզ /ատլասե գործվածքի նուրբ տեսակ/ (հետևամաս):

Վերին հատված (մանժետ, օղակաձև հարմարանք, օձիք)՝ 100% պոլիամիդ, քաշը՝ 330գ/մ²՝ (±10%), առաձգական ուժ, լայնակի՝ ≥1900Ն, առաձգական ուժ, երկայնական՝ ≥1900Ն, երկարացում ընդմիջման ժամանակ, լայնակի՝ 56%, հարաբերական երկարացումը խզման պահին, երկայնական՝ 43%, առաձգական ուժ, լայնակի՝ ≥600Ն, առաձգական ուժ, երկայնական՝ ≥600Ն: Արտաքին ներբան՝ հարվածներն ընդունող, կլանող միջանկյալ մասով: Ձգվածությունն ուղիղ կոշիկի կաղապարների (կալոդկաներ) վրա, ոետինե, ինքնամաքրվող նախշ /իր մակերեսին չի պահում կպչուն կամ կիսակպչուն նյութեր/, ներբանային գերազանց ամրաբռնում, չսահող, կայուն ներբանով, որը թույլ է տալիս գլորվել ոտքից մինչև կրունկ: Թեթև, կարծրությունը 63 Shore A /Shore A սանդղակը չափում է ավելի փափուկ նյութերի կարծրությունը/: Կրունկի նախշի խորությունը՝ 4,5 մմ, ոտնաթաթի նախշի խորությունը՝ 4,5 մմ:

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:*

ԿՈՂՄ

Շրջակա միջավայրի նախարարություն
Էկոհամակարգերի գնահատման և մոնիթորինգի կենտրոն
ՊՈԱԿ

Լ. Սեքսեքյան

/ստորագրություն/

Տ.Հ.

ԿՈՂՄ

«Վեգաս-2020» ՍՊԸ
տնօրեն

Դ. Լեմսի

/ստորագրություն/

Տ.Հ.

*: Եթե գործունեությունը իրականացվում է մի քանի հասցեներում նախագծային փաստաթղթերի դասակարգումը կատարվում է յուրաքանչյուր հասցեի համար առանձին:

** Եթե գործունեությունը ներառում է մեկ կամ մի քանի տարբեր տեսակի գործունեություններ, ապա գործունեության տարբերակները դասակարգվում են գործունեության ամենաբարձր դասակարգի համաձայն:

*** Եթե գործունեությունը ներառում է մեկ կամ մի քանի գործունեություններ, ապա գործունեության տարբերակները դասակարգվում են գործունեության ամենաբարձր դասակարգի համաձայն:

Հավելված N 2
25 /դեկտեմբերի /2025թ. կնքված
ՇՄՆԷՊԾ-ՀՄԱԱՊՁԲ-25/203 ծածկագրով պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափ աբաժնի համարը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
1	լրակազմ	75 000	22 500 000	300	ք. Երևան Նորք-մարաշ Արմենակյան 129շ, 3-րդ հարկ	300	Ապրանքների մատակարարումն իրականացվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2025թ

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 129

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

900011023265

00476409

Լուսինե Ալեքսանյան

/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ

« ՊԵԳԱՍ-2020» ՍՊԸ

Հասցե՝ Ք. Վանաձոր Ջ/Ա 99/40

ԻՆԵԿՈԲանկ ՓԲԸ

2052822304781001

06970658

Վարուժան Էլոյան

Կ.Տ

Հավելված N 3

25 /դեկտեմբերի /2025թ. կնքված

ՇՄՆԷՊԾ-ՀՄԱՊՁԲ-25/203 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախ ատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
1	35811170/4	համազգեստ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	22 500 000	22 500 000

ԳՆՈՐԴ

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 129

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

900011023265

00476409

գլխավոր քարտուղար Լուսինե Ալեքսանյան

ՎԱՃԱՌՈՂ

« ՊԵԳԱՍ-2020» ՍՊԸ

Հասցե՝ Ք. Վանաձոր Զ/Ա 99/40

ԻՆԵԿՈԲանկ ՓԲԸ

2052822304781001

06970658

տնօրեն՝ Վարուժան Էլոյան

Հավելված N 4

____/_____/2025թ. կնքված

ՇՄՆԷՊԾ-ՀՄԱԱՊՁԲ-25/203 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ- ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 20____թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 20_թ.

Պայմանագրի համարը՝ ՇՄՆԷՊԾ-ՀՄԱԱՊՁԲ-25/203

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 20__թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	համազգեստ							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	**Ապրանքը ընդունեց**
_____	_____
ստորագրություն	**ստորագրություն**
_____	_____
ազգանուն, անուն	**ազգանուն, անուն**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 4.1

____/_____/2025թ. կնքված

ՇՄՆԷՊԾ-ՀՄԱԱՊՁԲ-25/203 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ -ի (այսուհետ՝ Գնորդ) և ՊԵԳԱՍ-2020 ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող)

միջև 20 թ._____-ին կնքված N ՇՄՆԷՊԾ-ՀՄԱԱՊՁԲ-25/203

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
համազգեստ	լրակազմ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

20 թ.